ՑՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

ՄԱՐԻՆԷ ՀԱՐՈՑԵԱՆ

Յովհաննէս Քաջազնունին (Ղազիֆեանեան, կուսակցական ծածկանունով՝ Ռուբէն Իւանիլ, ծն. Ախալքալաք, 1868 - 1938) իր ժամանակի ամենապտիտ եւ ամենաողբերգական դէմքերից է։ Բազմաշնորհ մի անձնաւորութիւն, որի անունը երկար ժամանակ մոռացուած էր հայրենիքում։ Թերեւս այսօր, եթէ չիշատակւում է այս անունը, ապա առաւելապէս կապուած Հայաստանի Ա. Հանրապետութեան հետ, որի առաջին վարչապետը լինելու պատիւն ունեցաւ։ Ճարտարագէտ, արուեստաբան, գրականագէտ, քաղաքական գործիչ. ահա ոչ լրիւ ցանկը նրա հետաքրքրութիւնների շրջանակի (մանրամասն տե՛ս՝ Տանօթ. 62, 76)։ Ինքը՝ Քաջազնունին, Յովհաննէս Թումանեանի մասին գրուած յուշերի առիթով տարբերների հետուից նայելով իր անցած ուղուն, ինքնաքննադատաբար եւ իրեն բաւուկ չիատակութեամբ գրում է. «Ի՞նչ է եղել իմ տարաձգձերի ու հակումների այսպիսի բազմակողմանութեան հետեւանքը։ Այն, որ ոչ մի ասպարէզում ոչինչ գրական չեմ տուել, ճարտարագէտին խանգարել է փիլիսոփան, գեղարուեստասէրին՝ քաղաքական գործիչը եւ ընդհակառակը» (տե՛ս՝ «Անգարձ Ճամփորդը», Գարուն, Երեւան, 1994, թիւ 5, էջ 73)։ Իսկ տակաւին պատանի տարիներին եղբօրն ուղղած նամակներից մէկում գրում էր. «Ես կանգնած եմ երկու ճանապարհների ընտրութեան առաջ եւ չգիտեմ որ կողմ գնալ՝ Շեքսպիրի՞, թէ՞ Էրզրումի» (տե՛ս՝ Քաջազնունու. ինքնակենսագրութիւնը՝ Մարգարիտ Քաջազնունու. ձեռագիր ընդօրինակութեամբ, ԳԱԹ, ՑՔՖ 170)։ Շեքսպիրը խորհրդանիշ էր գրականութեան եւ գեղարուեստի, իսկ Էրզրումը՝ քաղաքականութեան։

Ճակատագրով նրան վերապահուած էր Էրզրումից ճանապարհը կենդի մեծ մասը նա ստիպուած եղաւ նուիրաբերել իր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գործին։ Ապրեց նրա ճակատագրով, նրա հետ կրեց բոլոր զառնութիւնները եւ ճակատագրի հեգնանքով, որպէս ժողովրդի թշնամին՝ իր մահկանացուն կնքեց ստալինեան բանտում։

Հրապարակուող նամակները գտնուում են Երեւանի Ե. Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Յովհաննէս Քաջազնունու Ֆոնդում (ԳԱԹ, ՑՔՖ), որտեղ՝ բացի հարազատներին գրած աւելի քան 200 նամակներից, պահւում են նաեւ Քաջազնունու գրական-փիլիսոփայական փորձերի, գրականագիտական թղթածների, վանում գտնուած ժամանակ իր կողմից գրի առնուած հայկական էպոսի տարբերակների եւ վասպուրականի քրդերի բանահիւսութեան նմոյշների ինքնագրերը (մեծ մասամբ՝ անտիպ)։ Քաջազնունու անձնական իրերը եւ արխիւի մի զգալի մասն էլ, որ վերաբերում է նրա քաղաքական գործունէութեանը, պահպանւում է Պատմութեան Թանգարանում։ Այս բոլոր ձեռագրերն ու փաստաթղթերը թանգարաններին է յանձնել դուստրը՝ Մարգարիտ Քաջազնունին, որը հօր մահից քսաներ ոչ միայն փրկել եւ արդուքիեամբ պահել է այդ ամէնը,

այլեւ տարիների ընթացքում կատարել է դրանց ձեւագիր-ընդօրինակումները, որոնց շնորհիւ այսօր հնարաւոր է դառնում վերականգնել որոշ կորսուած կամ գուցէեւ ինչ-ինչ նկատառումներով ոչնչացուած փաստաթղթեր։

Ժամանակագրօրէն կնոջն ու դուակներին գրուած նամակներն ընդգրկում են 1885-1937 թուականները՝ որոշ ընդհատումներով։ Սրանք, անշուշտ, անձնական նամակներ են եւ դրանով է պայմանաւորուած իրազարձութիւնների, երեւոյթների այն անմիջական ընկալումը, որ առկայ է նամակներում։ Անձնական նամակի առանձնայատկութիւններից մէկն էլ թերեւս այն է, որ գրողը պէտք չունի կեղծելու կամ դիւանագիտական նկատառումներով ինչ-ինչ բաներ թաքցնելու։ Այս նամակների ընթերցողը կը համոզուի, որ գրողը միշտ ծայրայեղօրէն անկեղծ է եւ երբեմն էլ անխնայ՝ իր գնահատականների մէջ, սակայն ամէնից անխնայ՝ իր անձի նկատմամբ։ Սոյն հրապարակման համար ընտրուել են յատկապէս այս նամակները այն նկատառումով, որ դրանք առաւելագոյնս են բացայայտում Քաջազնունի-քաղաքական գործչի եւ Քաջազնունի-մարդու կամ, ինչպէս ինքն էր սիրում ասել իր մասին. Հպարզապէս հայ մարդուն բարոյական նկարագիրը։

Հրապարակուող նամակներն անտիպ են։ Պահպանուած են, եւ հրատարակւում են առանց ուղղագրական եւ կէտադրական խմբագրումի։

Ա.՝ [Սաթենիկ Միրիմանեանին][1]. ԳԱԹ, ՑԳՖ 26 Ա

13 սեպտեմբերի, 1888ամի
Ս[անկտ] Պ[ետեր]Բուրգ[2]
Իմ Սաթէն

Երկտող նամակդ ստացայ: Ինչպէս ինքդ գուշակած կը լինես այդ նամակդ ախորժելի ինձ չը պիտի թուիր: Նախ՝ որ ռուսերէն էր գրած, հակառակ իմ բոլոր ցնորներիս, որովհետեւ, չը պիտի թաքցնեմ քեզանից, ես յոյս ունէի հայերէն գրած նամակ ստանալու: Բայց ինչքան էլ կարեւոր չէ ինձ համար այս հանգամանքը, դարձեալ ոժգոհութեանս գլխաւոր պատճառը այդ չէ: Ինձ համար ամենից ծանր եւ անտանելին այն է, որ դու ինձ չես հասկացել: Նամակիցդ կ՚երեւի, որ դու ինձանից նեղացած ես, բայց, ճշմարիտն կըսեմ, նեղանալու տեղիք չունէիր: Քեզ նեղացրել է այն հանգամանքը, որ ես նամակաս քո սխալների մասին խոսել եմ, դու կըսես, թէ որովհետեւ հայերէն այնքան վատ կը գրես, ուրեմն ամենից նպատակայարմարը այն կը լինի, որ դու գրես ինձ ինչքան կարելի է համառօտ, կարճ նամակներ:

Ի հարկէ, թէ ինչպիսի նամակներ կը գրես ինձ՝ - այդ քո գործն է: Կարող ես գրել երկտողեայ նամակներ, կարող ես ամիսներով ուշացնել այդ նամակները, կարող ես վերջապէս եւ բոլորովին չը գրել: Կը պնդեմ, այդ քո բանն է: Իմ կողմից ես միայն կուզեմ բացատրել քեզ իմ ցանկացածներուս խորհուրդը:

Երբ մարդ բան մը ունի, որ ամենից թանգ է իրեն համար նա նորան կը փայփայէ, կը պաշտպանէ, ամենայն ջանք գործ կը դնէ, որ այդ թանկագին գինը կրկնապատկուի, եռապատկուի: - Ինձ համար ամենաթանկագինը դու ես, ամենաթանկագինը լաւ հասկացիր, ասածս՝ - ամենաթանկագինը: Ես այնքան

սէրտ կապուած եմ հետդ, որ առանց քեզ չէ թէ երջանկութիւն, - ես կեանք անգամ չունեմ, չեմ կարող ունենալ: Եթե այս ամենը մինչեւ հիմա չէիր հասկացել, գոնեայ այժմ հասկացիր... Եւ ի՞նչ կայ զարմանալու, երբ ես կուզեմ, որ դու բոլորովին համապատասխան լինես իմ իդէալիս, ունենաս այն յատկութիւնները, ինչ յատկութիւններ, իմ կարծիքով, պիտի ունենայ ամենայն յարգուելու արժանի մարդ:- Իմ համոզմունքով, ազգութիւնից դուրս մարդկութիւն չը կայ, ամենայն մարդ, ամենից առաջ ազգի մը պիտի պատկանի, - ազգ չ'ունեցող մարդը, ինչպէս եւ կրոն չունեցողը, այլ եւս մարդ չէ: Հայերիս աւելի քան որ եւ իցէ ուրիշ ազգութեան հարկաւոր է մտածել մեր ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար, որովհետեւ այդ ինքնուրոյնութեանը մեծ վտանգներ կը սպառնան: Եվ ո՞վ պարտականութիւնն է հասկանալ այդ վտանգը եւ նորա առաջը առնել, եթէ ոչ այն դասակարգին, որ իրաւ ուսեալ կը կանչէ, որոնց մէջը գետեղուած են ազգի բոլոր հիւթերը, ուժերը, այն դասակարգին, որ իրրեւ ղեկաւար կանգնած է ազգի գլուխը, եւ այս պատճառով ահագին պատասխանատուութիւն է առած իր վերայ: Մեր այժմեան երիտասարդութիւնը, գոնեայ ուսանող երիտասարդութիւնը, այս բանը հասկացել է եւ չի զլանալ գործելու այս ուղղութեամբ: Մի հայ ուսանող, որ այժմ հայերէն իր մտքերը արտայայտելու ընդունակ չէ, ամենքի արհամարհանքին ենթակայ է դարձած: Նոքա որոնք որ չը գիտեն հայերէն, բայց պատուի նշոյլ ունեն իրանց վերայ, նոքա տենդագին նամակով այր-բեն կը տվորեն: - Վերջապէս, ինձ իմ ազգային վեհանձնութիւնս, որ ամեն վեհանձնութիւնից բարձր է, չի թոյլատրէ խոստովանել, որ ես իմ ամենամտերիմ խոսակցութիւնս եւ նամակագրութիւնս պիտի ունենամ օտար, ուրիշից գողացած լեզուով:

Եւ ի՞նչու դու հայերէն չես ուզէ գրել, որովհետեւ, կը ըսես հայերէն վատ կը գրես: Ես իրրեւ պատասխան քո ասածիդ, օրինակներ կը բերեմ, թէ ռուսերէն դու ինչքան վատ կը գրես; այս օրինակներով ես կուզեմ քեզ ապացուցել, որ եթէ լաւ գրելու համար կը գրես ռուսերէն թոշ՝ է աշխատանքդ: Իսկ դու ճեղացել ես, իբրեւ թէ իմ միտքս քեզ ստորացնելն էր, երբ նկատել էի քո սխալները: Ե՞ս քեզ ստորացնեմ... իմ մէջս այնքան շատ զարգացած է ինքնասիրութիւնը, որ ինձ անպատուողին գլուխը կը ջախջախեմ, բայց եւ այնպէս ես ավելի յօժարութեամբ կը համաձայնուէի դուրս գալ հրապարակ, ուր ամեն անցնող-դարձող թքեն երեսիս, քան թոյլ տալ ում որ իցէ քո մի մազին գոնեայ դիպչել, - եւ ես քեզ ստորացնեմ... Ամաչիր:

Կը կրկնեմ, կը պնդեմ, իմ ամենաջերմ ցանկութիւնս այն է, որ ոչ թէ միայն մեր նամակագրութիւնը, այլ եւ մեր առօրեայ լեզուն հայերէն լինի; - հաստատացած եմ, որ ժամանակին այս ցանկութիւնս կը կատարուի, որովհետեւ դու ինքդ կը հասկանաս քո սխալը: Այժմ այսքան կը սեմ, որ ինձ համար քո հայերէն սխալը ինձ համար բիւրապատիկ աւելի սիրելի է, քան ռուսերէն ուղիղ; - եւ մի՞թէ ես քեզանից լաւ կը գրեմ հայերէն, - սրանից երկու տարի առաջ ես երկու տող անգամ չէի կարող կցել, բայց հիմա վարժուելով, ես հասայ այն կէտին, որ արդէն լաւ թէ վատ կարող եմ բոլոր մտքերս յայտնել: Հաւատացած եմ, որ նոյն ճանապարհով դու մի տարուայ ընթացքում բոլորովին ազատ կը գրես հայերէն:

Քո Յովհաննէս

Բ.՝ [*Մաթեոսիկ Մրիմանեանին*]. ԳԱԹ, ՑՓՖ 118
[15 *Նոյեմբեր, Վան*]

Միրելիս, չը գրեցիր քո սեփական հասցէն, որ այլ եւս նեղութիւն չը տայի Խորէնին[4]: Մի մոռանա, գրի: Գրում ես՝ Վարսենիկը[5] ձեզ մօտ չէ այլեւս: Ու՞ր է գնացել, ի՞նքը չի ուզեցել մնալ, թէ՞ դու ես հրաժարուել պահել: Կարծեմ, անցեալ տարի յաճախում էր ինչ որ է կուրսեր[6], ինչ՞ով վերջացաւ: - Ո՞վ է ձեր երկու սենեակ վարձողը, հանգի՞ստ մարդ է: - Տարբերութիւն կա՞յ - արժէքի տեսակետից - Բագւայ ու Թիֆլիզի ապրուստի մէջ: Ո՞րքան ես վճարում տղայոց ուսման համար; ինչու՞ Մարգօյին[7] այդպիսի թանգ դպրոց ես տուել: - Ու՞մ հետ բարեկամութիւն ունես Թիֆլիզում, տեսնում՞ ես Լիզայի[8] հետ: - Սիմօնի[9] մահը ինձ համար շատ մեծ հարուած էր: Եւ անակնկալ միանգամայն: Երկու ամիս առաջ միասին էինք,

Պոլսից Կարին[10] միասին եկանք: Ճամբին ոտով քայլում, սար էր բարձրանում ինձանից լաւ: Ծերացած էր, նիհար ու ջղայնացած, բայց հիւանդ չէր երեւում: Երբ այստեղ Պոլսից առաջի հեռագիրը եկաւ, չը հաւատացի, չէի ուզում հաւատալ - կարծում էի, թէ բժ. Զաւրեանի[11] մասին է խօսքը: Հեռագիր տուի հարցրի. ո՞վ է մեռնողը, բժիշկը թէ Սիմօնը; երկու օր անցաւ, պատասխան ստացայ՝ Սիմօնը... Այսօր էլ դեռ չեմ կարողանում հաշտուել այն դառն մտքի հետ, թէ չըկայ այեւս Սիմօնը: Մխիթարական է այն ընդհանուր ու մեծ ցաւը, որով արձագանք տուեց այդ մահաւան ամբողջ հայ ժողովուրդը: Այդքան գիտակցութիւն, այդքան պարտաճանաչութիւն ես չէի սպասում; դա լաւ նշան է, դա atestat[12] է ժողովրդի հասունէութեան: Չը գիտեմ, կարդու՞մ էիր այդ օրերը լրագրները, եւ թէ որքան լի էին կովկասեան թերթերի տուած տեղեկութիւնները: Բայց ես ուշադրութեամբ կարդում էի Պոլսից եկած թերթերը եւ տեսնում էի, թէ ինչ մեծ յուզմունք է առաջ բերել Սիմօնի մահը եւ ինչ ցոյցեր են կատարուել: Պոլսում կատարած սգահանդէսը - մի եզակի երեւոյթ է մեր իրականութեան մէջ; ոչ մի մասնաւոր հայ մարդ մինչեւ այսօր թաղուած չի եղել այդպիսի մեծ հանդիսով: Հարիւրաւոր ու հարիւրաւոր հեռագրեր հայաբնակ բոլոր վայրերից, մանաւանդ տաճկահայաստանի գաւառներից; հարիւրաւոր հոգեհանգիստներ ու սգահանդէսներ ամենախուլ անկիւններում: Պոլսում՝ սգաւոր գնացքի ճամբի վրայ՝ խանութները փակ, տրամվայները[13] կանգնած: Զինուորական երաժշտութիւն, որ տուել էր իր կողմից թիւրք - զինուորական բարձրագոյն դպրոցը: Ահագին բազմութիւն ժողովրդի ամեն դասակարգերից, ամեն տեսակ հասկացողութեան, ամեն տեսակ ուղղութեան տէր մարդկանցից: Հայ Բարձրագոյն հոգեւորականութիւնը պատրիարքի տեղապահի հետ միասին: Ներկայացուցչութիւններ ազգային բոլոր հիմնարկութիւններից, ներկայացուցչութիւններ հայ ու թիւրք քաղաքական կուսակցութիւնների կողմից, հայ ու օտար մամուլի կողմից, ներկայացուցչութիւններ նախարարութիւնների կողմից, Պոլսի զինուորական վարչութեան կողմից...

Չը գիտեմ, ի՞նչպէս ընդունուեց դագաղը այդտեղ, Թիֆլիզում: Բայց գիտեմ, որ եթէ այդտեղ չէն կրկնուել Պոլսում տեղի ունեցած ցոյցերը, դրա պատճառը պիտի որոնել արտաքին անբարեյաջող պայմանների մէջ. Կովկասում Սիմօնը նոյնքան լաւ ծանոթ էր, նոյնքան մեծ ժողովրդականութիւն ունէր, որքան եւ

Տաճկայ - Հայաստանում: Տաճկաստանում հրատարակող բոլոր թերթերը - առանց ուղղութիւնների խտրութեան - հայ, թիւրք ու օտար լեզուներով, յոդուածներ ու ներբողականներ նուիրել էին հանգուցեալի յիշատակին: Այս բոլորը շատ մխիթարական է: Ժողովրդական գիտակցութիւնը բարձրացել է խոշոր աստիճանով - այսինքն կատարուել է այն, ինչի համար ապրեց ու մեռաւ Սիմոնը:

Քո Օհաննէս:

15 նոյեմբ. 1913, Վան:

<u>ղարձու՝</u>
<u>Նամակներ ուղղիր ինձ այսպիսի հասցեով.</u>
Gor. Van, Aziatskaya Turciya,
<u>Cherez Kars -- Karaurgan</u>
<u>G-nu Gmayaku Darbinian,</u>
<u>յանձնել Միրիմանովին[14]</u>
<u>Mr. Hmayak Darbinian[15]</u>
<u>Van, Turqie d'Asie.</u>

Այս երկու տարուայ ընթացքում Խորէնին 5-6 նամակ եմ գրել: Ի պատասխան չեմ ստացել եւ ոչ մի տող:

Գ.՝ [*Սաթենիկ Միրիմանեանին*]. ԳԱՔ, ՑՔՁ 129

Սիրելիս,

Ներիր որ նամակս ուշացրի: Ոչ մի ազատ րոպէ չունիմ: Դրութիւնը շատ շփոթ է ու բարդ: Պահանջւում է ահագին աշխատանք, խելք, հմտութիւն, հասկացողութիւն, - այսինք՝ մեր ոյժերից վեր բաներ: Եթէ այս պայմանների մէջ կարողացանք պետութիւն կազմակերպել, դա կատարեալ հրաշք կը լինի:

Աշոտի[16] մասին ոչինչ նոր բան (բացի Ռուբէնի[17] գրածից) չը գիտեմ:

Ռուբէնը մի քանի օրով այստեղ էր, այսօր վերադարձաւ Ախթի[18] (իր ծառայութեան տեղը), մօտ ապագայում կը փոխադրուի Երեւան ծառայելու:

Դուք ի՞նչ էք անում, գրիր:

Օհաննէս
8 օգոստոս

Դ.՝ [*Սաթենիկ Միրիմանեանին*]. ԳԱՔ, ՑՔՁ 131

Սիրելիս, գիտեմ որ օր - գիշեր մտածմունքդ Աշոտն է[19]: Դժբախտաբար, ոչինչ մխիթարական հաղորդել քեզ չեմ կարող: Տեղեկութիւն չունիմ: Այն ինչ լսել եմ մինչեւ այսօր, միմեանց հակասող ու միմեանց բացասող լուրեր են: Պատմում են իբրեւ թէ «ականատեսները»: Դուրս է գալիս բացարձակ սուտ: Այս երեւոյթը ինձ շատ էլ չի զարմացնում: Հասկանալու համար պէտք է պատկերացնել այն դրութիւնը, որի մէջ կորցրել ենք մենք Աշոտի հետքը. դա կամ կռի ժամն է, կամ փախուստը, կամ փախուստին անմիջապէս հետեւող օրը: Այսինքն այնպի-

սի ժամանակ, երբ մարդիկ ծայրաեղ յուզմունքի մեջ են, շփոթված, խառնված, հաւասարակշռութիւնը կորցրած: Այս դրութեան մէջ յիշողութիւնը հեշտութեամբ դաւաճանում է, չեղածը եղած է համարում, եղածը մոռանում է: Լինում են ի՛ հարկէ եւ պարզապէս ստախօսներ՝ թերեւս բարի նպատակով - յոյս տալ ու մխիթարել: Ոչ միայն Աշոտի, այլ քանի՞ - քանի՞ ուրիշների վերաբերմամբ սուտ լուրեր են ստեղծել ու հերքել, քանի - քանի անգամ «ականատեսները» նրանց մեռցրել ու նորից կենդանացրել են: Մնում է մի կողմ թողել լուրերը եւ եզրակացութիւններ անել օրեկոյի փաստերից: Այդպէս էլ անում եմ ես: Այն յոյսը, թէ Աշոտը մնացել է մեր լեռներում (Լոռայ կամ Ղազախի շրջանում) կամ խառնվել է որեւէ զօրամասի - այդ յոյսը ես այլեւս չունեմ: Եթէ այդպէս լիներ, այս երեք ամսայ ընթացքում արդէն կիմանայինք: Եթէ նոյնիսկ Աշոտը հիւանդ կամ վիրաւորված ընկած լինէր որ եւ է գիւղում, դարձեալ կիմանայինք: Մնում է երկու ենթադրութիւն. կամ Աշոտը գերի է ընկել թուրքերին ու տարել է ուրիշ գերիների հետ Կարս - Էրզրում, կամ սպանված է: Հասկանում ես, որ սրտիցս արիւն է կաթում այս խօսքը գրելիս, բայց պէտք է գրէմ որովհետեւ իրաւունք չեմ համարում թաքցնել քեզանից իմ երկիւղները: Այդ երկիւղը ես ունեմ արդէն եւ չեմ ուզում աչքերս փակել, խաբել ինձ: Դու եւս, սիրելիս, պիտի քաջութիւն ունենաս նոյնը անելու: Գիտեմ, որ սա մահացու հարուած է մօր սրտի համար, բայց դու պատրաստ պիտի լինես ընդունելու այդ հարուածը եւ դիմանալու նրան՝ ի սէր քո միւս որդիների: Գերիների ցուցակը չենք կարողացել ստանալ տաճիկներից, չը գիտենք նոյն իսկ նրանց ճիշտ թիւը: Գիտենք միայն, որ բաւականին թուով կան Կարսում եւ՝ մանաւանդ՝ Էրզրումում, - ուրիշ ոչինչ: Տաճկաստանը սկսել է վերադարձնել գերիներին: Արդէն երկու պարտիայ եկան հասան Երեւան (մօտ 300 մարդ, որոնց մէջը 7-8 սպայ): Մնացածներին էլ խոստանում է շուտով վերադարձնել, մաս - մաս: Մեզ մնում է զինւել համբերութեամբ ու սպասել: Գուցէ երջանկութիւն ունենանք գտնել այդ մնացածների մէջ մեր կորցրած որդուն: Կամ՝ ո՞վ գիտէ՝ գուցէ մի հրաշք պատահեց ու բոլորովին անակնկալ կերպով մեր Աշոտը յանկարծ երեւաց այնտեղից, որտեղից մենք ամենին չենք սպասում... Բայց ես այնքան սոսկում եմ անվերջ յուսախաբութիւններից, որ աշխատում եմ նախապատրաստել ինձ ամենավատին: - Մի բան միայն գիտեմ հաստատապէս եւ ուզում եմ որ դու եւս գիտենաս, որովհետեւ դրա մէջ մեծ մխիթարութիւն կայ, եթէ Աշոտը սպանված է, ուրեմն սպանված է Ղարաքիլիսայում, պատերազմի դաշտում, կռւի ժամանակ, իր զինուորական, քաղաքացիական ու հայրենասիրական բարձր պարտքը կատարելիս, սպանված է հերոսաբար, զենքը ձեռքին, մի այնպիսի փառաւոր կռւի մէջ, որի մասին իրանք տաճիկները խօսում են հիացմունքով ու պատկառանքով. մեր փոքրաթիւ զօրքերը չորս օր անընդհատ կռւել են առիւծների պէս իրանցից շատ գերազանց ոյժերի դէմ եւ նահանջել են միայն վերջի փամփուշտը այրելուց յետոյ: - Ոնջ է դուրս եկել Աշոտը այդ կռւից, թէ սպանւել է - երկու դէպքում էլ նա վաստակել է հայրենիքի սէրը, յարգանքը ու երախտագիտութիւնը. նա կռւել է մինչեւ վերջը եւ գուցէ իր մատաղ կեանքի գնով բարձր է պահել իր զինուորական պատիւը: - Էլ չեմ կարող գրել:

Մոռացայ, ասելացնեմ: Այն բոլոր պատմութիւնները, թէ Աշոտը եկել է Սանահին, յետոյ այսինչ գիւղը, յետոյ այսինչ գիւղը, յետոյ գերի է ընկել գնդա-

պետ Օսէփեանի[20] յետ եւ այլն - այդ բոլոր պատմութիւններին ես չեմ հաւատում, գիտեմ որ սուտ են: Կրկնում եմ, եթէ Աշոտը սպանուել է՝ ուրեմն սպանուել է Ղարաքիլիսում, կռի ժամանակ; իսկ եթէ գերի է ընկել, ուրեմն գերի է ընկել դարձեալ Ղարաքիլիսում:

Ռուրէնը արդէն 3 շաբաթ է, որ այստեղ է, ինձ մօտ: Մի ամսւայ արձակուրդ էր ստացել - na poprovlenie zdorovie[21]; իսկն ասած՝ polkovnik-ը[22] խաթր է արել, թողել է հանգստանալու եւ ոչ առողջանալու: Միանգամայն առողջ է, պնդացել, հաստացել է; լաւ կերակրւում է ինձ մօտ: Պոլկի[23] մէջ եղած կիսաքաղցած դրութիւնը, կեղտը անհանգստութիւնը ամենեւին չեն ազդել առողջութեան վրայ: Կարծես աւելի կազդուրւել է:

Ազատուել ներկայումս զինուորական ծառայութիւնից չի կարող, եթէ միայն չուզենայ dezertir[24] դառնալ: Իսկ dezertir-ի հալն էլ հալ չէ: Ուրիշ կոմբինացեայ ենք անում: Այս օրերիս նա կստանայ սպայի աստիճան - praporschick ingenernich voysk[25], եւ իրրեւ այդպիսին կը մնայ այստեղ, աւտոմօբիլների արհեստանոցում որ եւ է պաշտօնով: Ապահով ու հանգիստ դրութիւն կը լինի: Ռոճիկ այնքան կստանայ, որ կը կարողանայ կուշտ փորով հաց ուտել, աշխատանքն էլ ոչ ծանր կլինի եւ ոչ վտանգաւոր: Յետոյ՝ գործ կունենայ աւտոմօբիլների հետ, որ շատ է սիրում: Որոշել է արդէն, որ իր ապագայ գործը, աւտոմօբիլը պիտի լինի, ուրեմն այս ծառայութիւնը նրա համար մի տեսակ դպրոց կը լինի: - Եթէ հնար եղաւ, աստիճանը ստանալուց յետոյ կը գայ Թիֆլիս ձեզ տեսութեան:

Ջերմ համբոյրներով՝
քո Օհաննէս
14 սեպտ. 1918 Երեւան

Ե.՝ [*Մարգենիկ Միրիմանեանին*]. ԳԱԹ, ՑՊՖ 134

Սիրելիս,

տեղեկացայ, որ այդտեղի ալիւրը դառն է եղել: Ուստի վաղը ուղարկում եմ այստեղից 2 քսակ (10 փութ) տեղական ալիւր: Եթէ թուրքերը եւ՝ մանաւանդ, վրացիք անհամութիւն չանեն, յուսով եմ, որ կստանաս այն:

Անդրէասը[26] մեկնե՞ց Դիլիջան: Եթէ դեռ չի մեկնել, շտապեցրու, որովհետեւ ես խօսք եմ տուել, որ իսկոյն կանցնի պաշտօնին:

Մեր նորածին պետութեան համար կարծես յոյսի դռներ են բացւում: Վերջի ամիսը մենք ծանր կրիզիս[27] ապրեցինք հէնց մեր ներսում խորհրդի (մեր պառլամենտի) եւ կառավարութեան միջեւ ծագած անհամաձայնութիւնների առթիւ: Շատ էի վախենում, թէ կառավարութիւնը եւ դաշնակցական ֆրակցիաՀ խորհրդում ստիպւած լինեն չափազանց պատասխանատու քայլեր անել եւ երկիրը դնել անարխիական վիճակի: Բայց, փառք Աստծոյ, ելքը գտնւեց եւ կրիզիսը անցնում է: Դաշնակցութիւնը եկաւ համաձայնութեան Ժողովրդական կուսակցութեան[28] հետ, եւ սրանք երկուսով կազմում են արդէն մեծամասնութիւն խորհրդի մէջ եւ կարող են անարգելք վարել իրանց քաղաքականութիւնը: Այսօր կառավարութիւնը տալու է իր հրաժարականը եւ կազմակերպւում է նոր կառավա-

թիւն, Դաշնակցական եւ Ժողովրդական կուսակցութեան մասնակցութեամբ (koalitsiya)[29]: Ժողովրդական կուսակցութիւնից մտնում են կառավարութեան մէջ. Սամ.[սոն] Ցարութիւնեանը[30], Լ.[եռն] Ղուլեանը[31], Արտ.[աշէս] Էնֆիաջեանը[32] եւ Միք.[այէլ] Աթարէգեանը[33]: Մերոնցից մտնում են Կարճիկեանը[34], Ադամը[35] եւ Միր.[ական] Տիգրանեանը[36]: Ես մնում եմ պրեմիեր առանց պօրտֆելի: Դաշնակցութիւնը ստանում է իր ձեռը ամենից կարեւոր տեղերը.

պրեմիերութիւնը, արտաքին գործերի մինիստրութիւնը եւ ներքին գործերի մինիստրութիւնը:

Շատ դժար օրեր ապրեցի, մինչեւ կարողացայ հասցնել այս ելքին:

Ռուբէնը եւ ես առողջ ենք:

Համբոյրներով՝ Օհաննէս

4 նոյեմ.1918

Երեւան:

Զ.՝ [*Մաքենիկ Միրխանեանին*]. ԳԱԹ, ՑՔՁ 138

Սիրելիս,

Արամի[37] մասին լաւ տեղեկութիւն ունիմ: Այստեղ եկել է Էնզելիից[38] մի հայ օֆիցեր, որը պատմեց, որ սրանից մի 3 շաբաթ առաջ տեսել է Էնզելիում Արամին ողջ - առողջ: Արամի հետ չի խօսել, անձամբ էլ ծանօթ չէ; փողոցում պատահել է, ուշադրութիւն է դարձրել, հարցրել է թէ սա ո՞վ է, պատասխան է ստացել. «մեր պրեմիերի որդին է, Արամ Քաջազնունին» իսկ ուշադրութիւն է դարձրել, որովհետեւ այդ երիտասարդ օֆիցերը՝ պատմողի խօսքով՝ «vigiyadel koziyom»[39]: Ուրեմն ոչ միայն առողջ է եղել, այլ եւ տրամադրութիւնը բարձր: Ներքեսկայով[40] էր, ասում է կարմիր շալվարը հագին: - Հաւանական է որ այժմ Բագու լինի, իսկ շուտով մեր կողմերը երեւայ, որովհետեւ տեղեկութիւն ունինք, որ Բագից հայ զօրքերը պիտի փոխադրուին (անգլիացիների թոյլտուութեամբ) Հայաստան:

Ռուբէնը առաջուայ պէս առողջ է: Մինչեւ հիմա օֆիցերական աստիճան դեռ չի ստացել, որովհետեւ մեր երիտասարդ Հանրապետութեան մէջ դեռ չի որոշուած, թէ ո՞վ պիտի կատարի proizvodstvo-ները[41]: Կարծում եմ որ մինչեւ Նոր տարի այդ հարցը կը լուծի եւ Ռուբէնը կստանայ օֆիցերսկական առաջի աստիճանը: - Մնալով տակաւին զինուոր՝ նա մօտ մի ամիս է ստացել է պաշտոն՝ zaveduyushchiy garazhom[42], ամսէկան 500 ր. ռոճիկով: Նոյեմբեր ամսուայ պանսիօնի վճարը (300 ր.) տուել է իր սեփական փողերից:

Ուշ իմացայ, թէ 12 հազար ր. բանկից չեն տուել: Վախենալով, թէ միգուցէ փողի նեղութիւն ունենաս, հեռագրեցի իսկոյն Թիֆլիս, որ 3.000ր. տան քեզ իմ հաշիւն: Ստացե՞լ ես այդ փողը:

Ուղարկել էի 2 փուդ բրինձ եւ ապա 2 քսակ ալիւր: Ստացե՞լ ես, ալիւրը լա՞ւն է: Մտադիր եմ ձեզ դաւուրմա ուղարկելու: Ծարել եմ արդէն ման: Կարծում եմ, որ կը պարունակի աւել քան 3 փուդ: Տաւարի միսը կարելի է առնել այստեղ փուդը 100ր., լաւը՝ 120ր.:

Գուցէ այս գնացքով կարողանամ ուղարկել մի քանի շիշ դոշապ (եփած խաղողի հիւթ), ուզում էի ուղակել նաեւ սուճուղ (չուրչխել), բայց թանգ է՝ 18ր. ֆունտը: Առհասարակ թանգութիւնը այստեղ սոսկալի է (աւելի քան Թիֆլիս); միակ մատչելի բանը միսն է, (պանիրը 12ր. է ֆունտը, իւղը 20ր., շաքարը 40ր. եւ այլն):

Երկու օրից ոչ մի տաճիկ ասկէր չի լինի այլ եւս մեր երկրում: Մի ահագին սար է որ ընկնում է կրծքերիցս եւ առաջի անգամն է ամիսների ընթացքում, որ հնարաւորութիւն ենք ստանում մի քիչ ազատ շունչ քաշել: Թուրքական կօշմարը խեղդում էր մեզ, կաշկանդում, ձեռներս ոտներս կապում: Այժմ մի նոր շրջան է սկսւում մեր կեանքի մէջ: Յուսով եմ՝ ամենադժարը անցել ենք արդէն, մեր ետեւը թողել: Այսօր մտան Ալեքսանդրապօլ մեր զօրքերը: Բռնում ենք աստիճանարար երկաթուղային գիծը, Երեւանից սկսած դէպի Ալեքսանդրապօլ եւ դէպի Ջուլֆայ: Ուլուխանլու, Էջմիածին եւ Սարդարապատ մեծ կայարանները արդէն մեր ձեռին են: Մինչեւ նամակս ստանալդ յուսով եմ, որ ամբողջ գիծը, Երեւան - Ալեքսանդրապօլ, մեր ձեռը կը լինի: Գուցէ դժարութիւնների հանդիպենք հարաւ - արեւելքում, դէպի Նախիջեւան եւ Ջուլֆայ շարժուելիս: Այդ վայրերը բռնուած են թուրքերով (ոչ տաճիկ, այլ տեղական), ուստի չեն ուզում ճանաչել մեր պետութիւնը եւ սպառնում են զէնքով դիմադրել, եթէ փորձ անենք մտնել իրանց երկիրը: Լաւ զինուած են, բայց վատ կազմակերպուած; յուսով ենք, որ լուրջ դիմադրութիւն չը պիտի կարողանան ցոյց տալ: Մինչեւ հիմա գրաւած տեղերս նոյնպես թուրքեր են, բայց մեր զօրքերին ընդունում են խոնարհ ու հնազանդ: Ախ՝, մեր զօրքերը: Առանց սրտի կսկիծի եւ առանց հպարտութեան չի կարելի նայել մեր զինուորներին: Վրաները շոր չունեն, ոտներին կոշիկ չունեն, կազարմաներում[5] պառկում են չոր յատակի վրայ, կերակրում են օրէկան մի ֆունտ հացով, բայց իրանց պարտականութիւնները կատարում են անտրտունջ, ամենայն կարգապահութեամբ, պատրաստ ամեն տեսակ զոհաբերութիւնների: Հայ մարդու չարքաշութիւնը եւ հոգեկան կորովը եւ՝ զարմացնում եւ՝ հիացնում է ինձ: Եթէ մի օր սրանց հնարաւորութիւն տրւի մարդավայել ապրելու...

Համբոյրներով՝ քո Օհաննէս

4 դեկտ. 1918. Երեւան:

Է.՝ [*Մաթեոսիկ Միրիմանեանին*]. ԳԱԹ, ՑԳՋ 142

Սիրելի,

Հաւանօրէն չորեքշաբթի օրը, ամսոյս 14, դուրս կը գամ Թիֆլիս, այստեղից Եւրոպա գնալու համար: Թիֆլիսում կը մնամ մի քանի օր (4-5, գուցէ մի շաբաթ): Ռուբենը հետս չի լինի, գնում եմ մենակ:

Քեզանից ոչինչ տեղեկութիւն դեռ չեմ ստացած, թէեւ ինքս 2-3 նամակ գրել եմ: Ռուբէնը աշխատում է իր արհեստանոցում: Առողջ է, Արամը մինչեւ հիմա այստեղ է; թժ.[իշկ] Սաղեանը սրսկումներ արաւ, այժմ paroksizmներ[4] չեն կրկնւում: Պէտք է գնար ծառայութեան Նոր-Բայազետ; բայց հիմա նոր պաշտօն

ստացար՝ Ղարսում: Ցուսով եմ որ Ղարսի լեռնային օդը վերջնականապէս կը բժշկի նրան:

Վարդգէսը[45] առողջացաւ, հակառակ բժիշկների մարգարէութիւններին: Պալլան այստեղ է: ապրում են մի շատ վատ, կեղտոտ սենեակում, - բայց գոհ են, որ այդքան գոնէ կարողացել են ճարել:

Մկրտիչից[46] իմացայ, որ հայրս[47] եկել է արդէն Դիլիջան: Այդ լաւ եղաւ: Դիլիջանում նա կունենայ մի թեթև աշխատանք (զինուորական քահանայ) եւ մի փոքր վաստակ:

Մեր հայրենիքում դրութիւնը մնում է տակաւին ծանր եւ անորոշ: Քաղաքական խոշոր յաջողութիւններ ենք ունեցել - մեզ յանձնւում է ամբողջ Ղարսի շրջանը եւ Նախիջեւանի գաւառը, որ աստիճանաբար գրաւում ենք մեր զօրքերով եւ վարչութիւնով; տեղաւորում ենք նաեւ՝ մաս-մաս՝ զաղթականութեանը: Բայց կէնսական մթերքների պակասութիւնը մնումէ նախկին սուր դրութեանը: Հաց համարեայ չի մտնում երկիր, ժողովուրդը շարունակում է մնալ դատապարտուած սովի: Բախտաւորապէս սպասում է այս ամռան եւ աշնան առատ հունձ, շնորհիւ անվերջ անձրեւների, որ շարունակ գալիս են, հակառակ Երեւանի կլիմայական պայմանների: Արդէն շատ ճոխ խօտ է բուսել, որ հնարաւորութիւն է տալիս փրկել սովամահից անասունների մնացորդը:

Ցտեսութիւն քո Օհանէս:
10 մայիսի 1919
Երեւան:.

Ը.՝ [*Մաթեոսիկ Միրխմանեանին*]. ԳԱԹ, ՑՔՖ 144

Սիրելի, նամակս գրում եմ Պոլսից: Երէկ չէ առաջի օրը (ամսոյս 5-ին) հասանք այստեղ, իսկ այսօր մեկնում ենք Մարսէյլ: Բաթում մնացինք մի քանի ժամ միայն: Բաթումից Պոլիս շատ դանդաղ եկանք (6 օր փոխանակ 2 ½ - 3 օրւայ), որովհետեւ մտնում ենք բոլոր նաւահանգիստները եւ երկար կանգնում: Այդպէս՝ այցելեցինք Տրաբիզօն, Կերասուն, Օրդու, Սամսոն եւ Զուգուլդակ: Այս բոլոր ծովափնեայ քաղաքներում էլ արդէն հաւաքւում են քիչ-քիչ հայեր: Բայց մասսայական շարժումներ դեռ չկան, որովհետեւ վստահութիւն չունեն ապահովութեան վրայ: Ճիշտ է, այդ բոլոր քաղաքներում նստած են արդէն դաշնակից պետութիւնների միսսիայները, փոքրաթիւ զօրական պահակներով, բայց այդ պահակները այն ոյժը չեն, որ կարողանան ջարդերի առաջը առնել, եթէ թուրքերը վերսկսեն ջարդերը: - Տեսակցութիւն ունեցայ այդ քաղաքների հայ ազգաբնակչութեան ներկայացուցիչների հետ: Մանր - մունր վաճառականներ են, ամբողջովին տարուած իրանց առօրեայ հոգսերով; բայց բոլորն էլ ոգեւորուած են ազատ ու անկախ Հայաստանի գաղափարով: - Պոլսում երէկ ամբողջ օրը մի շարք տեսակցութիւններ ունեցայ քաղաքական եւ հասարակական ազդեցիկ շրջանների հետ; իսկ երեկոյան թէյի էի հրաւիրած, ուր ներկայ էին բոլոր «ազգային ջոջերը» (70-80 մարդ): Սովորական ճառեր արտասանեցին կենացներ խմեցին (հասկանալի է, որ «թէյի» հետ կար լաւ շամպան): Գիտես որ ճառախօսութեան մէջ տաճկահայերը առհասարակ, իսկ պոլսահայերը մասնաւորա-

պէս շատ վարպետ են: Բայց եւ այնպէս ճառերի մէջ զգացում էր անկեղծ շեշտեր, իսկական ոգեւորութիւն: - Պոլսում արդէն հաւաքւած է մօտ 150 հազար հայ: Կեանքը եռում է: Տաճկական իշխանութիւնը լոկ անւանական է: Իսկական տէրը քաղաքի դաշնակից պետութիւններն են, որ ունին իրանց զօրքը եւ ժանդարմերիայն: - Քաղաքական կացութիւնը մնում է տակաւին անորոշ: - Մեծ թիւով ռուսահայեր կան հաւաքւած այնտեղ գլխաւորապէս խոշոր բուրժուազիային, որ Օդեսայի կամ Նովորոսիյսկի[48] վրայով փախել է բոլշեւիկներից: Տեսնեցայ մի քանիսների հետ: Բոլորն էլ ցանկութիւն ունին «ազգասիրաբար» փոխադրել Հայաստան իրանց կապիտալներով հաղորդ, մեր երկրում խոշոր արդիւնաբերական եւ առեւտրական գործեր ձեռնարկելու համար: Պարզ է որ իսկական շարժառիթը ազգասիրութիւնը չէ, այլ կապիտալները տեղաւորցնելու եւ շահագործելու կարիքը: Բայց եւ այնպէս այդ տրամադրութիւնը մեզ համար շատ նպաստաւոր է, որովհետեւ մեր երկիրը մեծ կարիք ունի կապիտալներու: Թո՛ղ գայ այդ կապիտալը, թող զարգացնէ արդիւնաբերութիւնը եւ առեւտուրը եւ թող շահի, շահի ժողովուրդի աշխատանքով, - վնաս չունի:

Առողջութիւնս լաւ է:

Համբոյրներով ու բարեւներով, քո Օհաննէս:

7 յունիսի 1919, Պոլիս:

Թ.՝ [*Մաթենիկ Միրիմանեանին*]. ԳԱԹ, ՑԹՖ 143

22 յունիսի, Պարիզ[49] [1919]

Սիրելիս,

օգտւում եմ դէպքից այս երկտողը գրելու: Երկար չեմ գրում որովհետեւ մատս ցաւում է, գրիչը չեմ կարող բռնել:

Արդէն 8 օր է Պարիզում եմ: Մեր հարցը մնում է իր նախկին անորոշ դրութեան մէջ: Չը գիտենք, թէ ինչ սահմաններում պիտի ճանաչւենք մենք եւ ում պիտի յանձնւի մեզ հովանաւորելը: Այսօր վերջնական վճիռ կը կայացւի Գերմանիայի համար: Դրանից յետոյ հերթի կը դրւի Աւստրիայի հարցը, ապա Բուլղարիայի, ապա Թուրքիայի եւ սրանից յետոյ է որ պիտի լրջօրէն զբաղւին մեզանով: Յոյս ունինք, թէ եկը բարեյաջող պիտի լինի մեզ համար:

Տնտեսական հարցը բարեյաջող կէրպով լուծում է հէնց այժմս եւ ետ: Ըստ երեւոյթին մենք հնարաւորութիւն պիտի ունենանք բաւականին խոշոր գումարի (25-30 միլիոն ֆրանկի) ապրանքներ գնել ամերիկացիներից բաւականին մատչելի գներով, եւ՝ որ մեզ համար ամենից կարեւորն է՝ ոչ կանխիկ դրամով, այլ մի քանի տարւայ վարկով:

Թանգութիւն այստեղ եւս մեծ է. ապրուստի եւ ապրանքների [գներ]ը 3-5 անգամ բարձր են սովորականներից:

Ես առողջ եմ: Համբուրում եմ ամենքիդ:

քո Օհաննէս:

անդնեցի, գնդապետ եղած են Գրիգոր, ոչ ջարդերը ուշադրությունս, բայց խեղդը վերապրյալ:

Եվ այդ բոլոր Ձայրերը անցել են գիտակս, գրեթե եմ, ապրել եմ այդ դարերը և — մնացել եմ կենդանի: Վաղ միտքս մնացել եմ կենդանի, այլ և պատել եմ ընդարձակությունն մտքիս ու զարգացել իրար հետևանքներ գրելու: Անհավատալի է արդյոք: Բնչ է որ, — անկայունություն, անհերեւութություն թե՞ հիդրոգրություն: Վաղ մեջը և վաղ մնալը: Գաղտնիքը Երանեմն է, վաղ մնալն այդպես էլ են մնում եմ հետո վառ հոգեվոր, — և թերևս ավելի, քան 15 տարի առաջ: Բարդված եմ յես անշնչացած, խորտակված է իմ գաղափարի գիծը, խորտակված են իմ հեռուն ուղիները, բայց ամենայն չի խորտակված իմ կյանքին բովանդակությունն գովոց ինչ: Հայաստանի ազգությունը կյանքս կատարվում է, — ասես այն ամենի գաղտը, վերջ էանգնել Ջանանում է մտածումը: Կատարվում է և այդ կատարումն մեջ ես էլ ներգրավում եմ իմ փոքր ազգությունը: Անհա այն գիտակցությունը, վաղ պատում է ինձ կանգնած: Մի անգամ հերթ կը լրանա իմ 65 տարին: Եվ այդ հանգամանքն, մարմնով ու հոգով ոգեշնչած, ուժասպառ, յես առաջվա զրաց վեր եմ կենում անհոգնել, գնում եմ աշխատանքի, հրաբխանում եմ, ինչ- ոգեշնչվում է մի գրական բան անել և արդյունք տալով, յերբ դրա անցնում է ապարդյուն:

Անհա, պիրելիս, թե հայրիկը ու Ելա մեծ գաղտնիքը:

Հնարավորություն կա՝ Ձայրս շնորհվա

Յովհաննէս Քաջազնունու ձեռագիրը

Ժ.՝ [Զաւակներին]. ԳԱԹ, ՑԳՖ 156

30 օգոստ. 1920
Պարիզ:

Հրաչիկ ջան,
Ռուբէն ջան,
Մարգօ ջան
Կարէն ջան,

Սիրելիք:

Ձեր նամակները ստացայ այսօր:

Արդէն մի շաբաթ է որ Պարիզ եմ; եկել եմ այստեղ տուն վերադառնալու նպատակով, բայց ստիպած եմ մի քիչ մնալու, - մի կարեւոր գործ կարգադրելու համար:

- Սեպտեմբերի 18-ին (եթէ անակնկալ արգելքներ չեղան) նաւ կը նստիմ Sorrնտո (հարաւային Իտալիայ) եւ հոկտեմբերի առաջի թւականներին յոյս ունիմ հասնել Թիֆլիս:

Այսօր տեղեկութիւն ստացայ, թէ կառավարութիւնը նշանակել է ինձ Դեսպան Կ.Պոլսում: Բայց ես այդ պաշտօնը չը պիտի ընդունեմ: Իմ նպատակն է՝ օր առաջ հասնիլ Երեւան, հաշիւ տալ կառավարութեանը իմ երկարատեւ ճամբորդութեան մասին եւ ապա մտնել բանակը իբրեւ կամաւոր զինւոր: Անեամնեծ բաղձանքս է՝ անձամբ ու ֆիզիքապէս մասնակից լինել կռիւներին, մեր հերոս – զինւորների կողքին կանգնած՝ նրանց հետ միասին պաշտպանել հայրենիքի անկախութիւնը եւ՝ եթէ բախտ ունեցայ՝ մեռնել պատերազմի դաշտում: Եւ դա ամենալաւ մահն է, որ դուք կարող էիք ցանկանալ ձեր հայրիկի համար, որ արդէն բաւականին ծերացել է ու բաւականին յոգնել այս կեանքից:

[Կողմնակի տեղեկութիւն ստացայ (ոչ ստոյգ) թէ մայրիկը ձեր բոլորիդ հետ միասին ծրագրում է փոխադրուել Երեւան: Եթէ ճիշտ է, դա ինձ շատ ուրախացնում է: Նամակարերս՝ Խորէն Սրբազանը[30] կը հարցնէ դրա մասին մայրիկին: Եթէ դրական պատասխան ստանայ, ինձանից յանձնարարութիւն ունի՝ Երեւանում բնակարան գտնել մեզ համար: Գիտեմ, որ դա շատ դժար բան է եւ թէ բնակարանը ամէն տեսակի անյարմարութիւններ պիտի ունենայ, բայց եթէ ընտրողը ես լինէի, կասէի որ][31] ինձ համար (կարծում եմ որ նոյնպէս եւ ձեզ համար) աւելի գերադասելի է 2 - 3 խղճուկ սենեակ Անկախ Հայաստանի մէջ, քան լաւագոյն բնակարանը ուր որ էլ նա լինի, - էլ չեմ խօսում վրացական Թիֆլիսի մասին:

Ձեր մտադրութիւնների մասին ինձ տեղեկութիւն տուէք Բաթում, մեր այնտեղի հիւպատոսի հասցեով:

Սրանից 2 ամիս առաջ (յունիսի վերջերին կամ յուլիսի սկզբներին) ամերիկացի պ. Վիկրիի[32] ձեռքով ուղարկել էի ձեզ նամակներ եւ 240 դոլլար փող: Զարմանում եմ (եւ ցաւում) որ չէք ստացած: Հանդիպեցէք մեր դիւանագիտական միսսիան ու հարցրէք թէ արդեօք պ. Վիկրին ծրար չի՞ թողել այնտեղ՝ մայրիկին յանձնելու համար:

[.....][33]

Մայրիկի առողջութեան մասին ոչինչ չէք գրել: Ու շատ վատ էք արել. մի բան պէտք է գրէիք: Նոյն իսկ եթէ շատ վատ է (գիտեմ որ շատ լաւ չի կարող լինել), դարձեալ պիտի գրէիք, որովհետեւ ձեր լռութիւնը աւելի եւս անհանգստացնում է ինձ: Ինչ եւ է, կը գամ, կը տեսնեմ:

Իմ առողջութիւնը լաւ է: Դեռ կանգնած եմ ոտներիս վրայ եւ գլուխս բարձր եմ պահում: Հասկանում էք ի՞նարկէ, որ սրտիցս արիւն է կաթում, բայց ոչ ոք եւ ոչ մի բոպէ ընկճուած ինձ չը տեսաւ: Յույս ունեմ ու հաստատ կամք՝ որ մինչեւ վերջը կը մնամ այսպէս անընկճելի; իմ տղաների պատիւը, նրանց սուրբ յիշատակը այդպիսի պարտականութիւն է դնում ինձ վրայ:

Համբուրում եմ բոլորիդ սիրով ու կարոտով:

Ձեր հայրիկը:

ԺԱ.՝ [*Մարգարիտ Քաջազնունի*]. ԴԱԹ, ՑԲՑ 161

Մարգուշ ջան,

Նախ՝ հայերէն դու բաւականին լաւ ես գրում: Քո հասակում ես այդքան չէի կարող գրել: Եթէ հետեւիս ու մի քիչ աշխատես՝ անկասկած պիտի յաջողես:

Այն, ինչ որ գրել ես Կարէնի[34] մասին - շատ ու շատ ուրախացնում է ինձ: Որքա՜ն կը ցանկանայի, որ նա իմ մօտ լինէր... Բայց քո ծրագիրը՝ այստեղ բերել Կարէնին, առայժմս անիրագործելի է ու անընպատակայարմար. քանի որ Կարէնը սկսել է լրջօրէն պարապել, պէտք է որ շարունակի ու մի որոշ շրջան ամբողջացնի: Պոկել այժմ տեղից՝ կը նշանակէր նորէն պատահարների մէջ ձգել: Հոգեկան այն ուրոյն կացութիւնը, որ դու նկարագրում ես - անցողակի երեւոյթ է. Կարէնը ապրում է perelomi-ի[35] շրջան, մի բան որ շատ յատուկ է իր հասակին: Յուսով եմ, թէ այդպէս եւ թէ Կարէնը կը գտնի իր հաւասարակշռութիւնը:

Շա՛տ լաւ ես գրել քո մասին: Այդպէս էլ եղիր, սիրելի աղջիկս: Ամեն մարդ պիտի ունենայ իր հոգու խորքերում մի Աստուած ու մի պաշտամունք: Ով չունի այդ՝ վերջին աղքատն է: Նիւթական ոչ մի բարդութիւն չի կարող փոխարինել կամ լրացնել սրբութեան բացակայութիւնը: Ասում ես, որ ապագայում ամրոցներ չես սպասում քեզ համար: Պէտք չեն ամրոցներ: Դու մի փոքրիկ տաճար կա-ռուցանիր քո սրտի մէջ եւ դրանով իսկ շա՛տ հարուստ կը լինես դու: Սովորի՛ր - գիտութիւնը լաւ բան է: Բայց երբէք մի մոռանայ, որ ամեն մարդ՝ ապրելիս՝ սպառում է արժէքներ եւ այդ արժէքները սպառելու իրաւունք ունենալու համար պէտք է ի՛նքն էլ աշխատի, արդիւնաբերի փոխարժէքներ:

Գրում ես, որ իմ մասին տեղեկութիւններ էք ունեցել լրագրերից՝ Վիեննայի Խորհրդաժողովի[36] առիթով: Չը գիտեմ, ի՞նչ եք կարդացել լրագրներում: Վիեննայի Խորհրդաժողովում ես ներկայ չեմ եղել, բայց ներկայացրել եմ մի ընդարձակ զեկուցագիր, որը մի քանի ամիս առաջ տպագրել եմ ու հրատարակել առանձին գրքոյկով[37]: Շատ ցաւում եմ, որ այդ գրքոյկը չը պիտի հասնի ձեր ձեռը: Վերնագիրն է. «Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս»: Վերլուծում եմ մեր մօտիկ անցեալն ու ներկան եւ գալիս եմ այն եզրակացութեան - այն հաստատ համոզման - որ Դաշնակցութիւնը վերջացրել է իր դերը, պէտք չէ այլեւս հայ ժողովուրդին ու պետութեան, հետեւապէս՝ պէտք է վերջ դնի իր գոյութեան եւ ասպարէզը թողնի հայ Բոլշեւիկներին: Խորհրդաժողովը չի համաձայնել իմ տեսակետի հետ եւ ընդունել է որոշումներ, որոնք դէմ են իմ խղճին ու մտքին: Այս պատճառով ես դուրս եմ եկել կուսակցութիւնից եւ այժմս «ազատ քաղաքացի» եմ: Մի տենչ ունեմ միայն. վերադառնալ Հայաստան եւ աշխատել հայ ժողովրդի համար, - ինչ աշխատանք էլ լինի՝ թէկուզ Երեւանի փողոցները սալայատակել ու արդերը կանոնաւորել: Այդ յոյսով էլ ապրում եմ: Եւ կը գամ, հենց որ ֆիզիքապէս հնարին լինի գալս: Անասելիօրէն կարօտել եմ ձեզ եւ հայրենիքիս:

Բօստօնում հրատարակւող *Հայրենիք* ամսագրում տպագրւում է իմ շատ երկար յոդւածը - «Ազգ եւ Հայրենիք»[38] վերնագրով: Մտադիր եմ հրատարակել առանձին գրքոյկով (հրատարակիչ ունեմ արդէն): Ցաւում եմ, որ այդ գրւածն էլ չը պիտի կարողանաք կարդալ: Կարծում եմ, որ հաճոյքով կը կարդայիք ու շատ բան կը սովորէիք - յամենայն դէպս՝ մտածելու առատ նիւթ կունենայիք: Ես՝ իմ մենակութեան ու ակամայ պարապութեան մէջ՝ մտածելը փնշակ եմ արել ու շատ բան, որ չեմ հասկացել կեանքի եռուզեռի մէջ՝ սկսում եմ կամաց - կամաց հասկանալ:

Առողջութիւնս լաւ է: Այս երկու ու կէս տարւայ տարագրութեանս մէջ միայն մի անգամ լրջօրէն հիւանդացել եմ - 1921 թւականի ամրան՝ Թեհրանում: Մնացած բոլոր ժամանակ առողջ եմ եղել ու պինդ. Բուքարէշտում ոչ մի օր անկողին պառկած չեմ:

Նամակս ուղարկում եմ Բերլինի վրայով: Վաղը կուղարկեմ մի ուրիշ նամակ՝ Կարէնին՝ Պոլսի վրայով: Դուք էլ կարող եք մէջ-ընդ-մէջ ուղղել ձեր նամակները Պոլսի վրայով: Պոլսի հասցէն է mr. R. Cheuhlaian / c/o Toledo et Behaz/ Omer – Abid Han, 11 e Figure 1Equation 1t 15, Galata,Constantinopole, իսկ մէջը կը դնեք ծրար իմ Բուքրէշտի հասցէով: Բուքրէշտի իմ երկրորդ հասցէն է. Frères A. et v. Baraghian/magazin Couca/ 60, calea Viktoriel, 60, Bucarest /Romania/ - յանձնելու պրն. Միրիմանեանին: Վերջի հասցէով կարող եք ուղղել անմիջապէս Բուքրէշտ /առանց Բերլինի կամ Պոլսի/:

Հազար համբոյրներով՝ հայրիկդ:
14 նոյեմբ. 1923 Բուքրէշտ:

Ռուբեն ջան,

Դեկտեմբերի 31-ն է, տարվա վերջին օրը, գիշերվա ժամի մոտ 11-ը: Մարգոն գնացել է ընկերների մոտ՝ Նոր Տարին դիմավորելու: Բնակարանում մայրիկն ու ես մնացել ենք մենակ: Երկուսս էլ լուռ ենք: Մայրիկը նստած է սեղանատնում, ես իմ սենյակում եմ: Չը գիտեմ ինչ մտքերի մեջ է խորասուզված մայրիկը, իսկ ես ընկել եմ հիշողությունների[ի] աշխարհը: Եվ ահա մտքերս յեկան կանգնեցին քեզ վրա, - հիշեցի, թե ինչպես ճիշտ 12 տարի առաջ, այս նույն գիշերը, ստացա քո յերկտողը[59] Ղարսից եւ քե՛ ի՛նչ ապրեցի յես այն որերը... Ու մի անհաղթելի պահանջ զգացի գրել քեզ, թեեւ գրելը այնքանել հեշտ չե, մեր բնակարանում շատ ցուրտ է (8 աստիճան ռեոմյուրով) եւ գրիչը հազիվ եմ շարժում, քանի որ ձեռներիս ձեռնոցներ ունեմ հագած:

Ցուշեր, անվերջ հուշեր, շարան-շարան, մեկը մյուսի հետեւից... Քանի - քանի նոր տարիներ անցել են գլխովս ու վո՛ւրքան տարբեր Նոր Տարիներ:

Մանկության տարիներս պապենական տան մեջ՝ նահապետական նիստ ու կացով, հնադարյան սովորություններով ու կարգերով[60]: Առաջի տարիները Թիֆլիսում՝ ուտար միջավայր, փակ պանսիոնի գարշելի մթնոլորտ, ընտանիքի ու հայրենիքի կարոտ: Հետագա տարիները դպրոցում՝ առաջի ցասումներ դրպրոցական կարգերի ու ուսուցիչների դեմ, անարդարությեան, բռնությեան ու իրավազրկության դեմ: Առաջին աղոտ յերազներ մարդավայե կյանքի մասին, ծանոթություն անլեզալ գրականության հետ, գաղտնի խմբակցություններ[61] (խի՛ստ կոնսպերատիվ), ծրագրեր, տաք - տաք վեճեր: Հետո՝ ուսանողական շրջան[62]. մի կողմից՝ աղմկալից հարբեցողություն մայրաքաղաքի տրակտիրներում ու փողոցային ընդհարումներ վոստիկանության հետ, մյուս կողմից՝ ըմբոստ ոգու վերջնական կազմակերպում, հեղափոխական տրամադրությունների ծավալում ու խորացում, քաղաքական խիզախ ծրագրեր ու պատրաստություններ, առաջին փորձեր լրջորեն կազմակերպվելու պայքարի համար, աշխատելու ու զոհվելու – մանավանդ զոհվելու - բուռն տենչ: Արանքում՝ սիրահարություն, ամուսնություն[63], կին, յերեխաներ: Հարատեւ ու սուր կոնֆլիկտ՝ ընտանիքի հոր ու քաղաքական գործիչի պարտականությունների մեջ: Հետո՝ յերկար տարիներ ընդհատակյա աշխատանքի, մշտական լարված դրություն, մշտական յերկյուղ բռնվելու, շպիկներ[64], խուզարկություններ, ժանդարմներիս:

Հետո՝ թուրք - հայկական արյունահեղ ընդհարումներ, զինված ինքնապաշտպանություն, կյանքի ու մահվան կռիվ: Հետո՝ առաջին հեղափոխությունը[65], նոր հույսեր ու հեռանկարներ, նոր դիրքավորումներ, կարճատեւ վոգեւորությունն: Հետո՝ Ստոլիպինյան ռեժիմ[66], սրված ռեակցիա, հետապնդումների խստացում, ձերբակալություն, մեղադրական ակտ, քաղաքական մեծ դատ[67]: Հետո՝ փախուստ արտասահման[68], թափառում «ոտար հորիզոնների տակ», ինչպես կասեր Սիարոնյանը[69]: Հետո՝ կես լեգալ վերադարձ, պատերազմ, Ազգային խորհուրդ, կամավորական խմբեր, վճռական պայքարի յեռուզեռ: Հետո՝ սարսափելի 15 թվականը. տեղահանություն, կոտորած, բնաջնջում, տասնյակ հազարներով փախստականներ, սով, համաճարակ: Մի ահռելի զոհաբերու-

խորտակված են իմ հետեւած ուղիները, բայց ամենեին չի խորտակված իմ կյանքին բովանդակություն տվող խղճը: Հայաստանի ազգային պետական կյանքը կառուցվում է, - ահա այն ահագին փաստը, վորի հանդեպ նսեմանում է մնացածը: Կառուցվում է եւ այդ կառուցման մեջ ես էլ ներդրում եմ իմ փչուր աշխատանքը[26]: Ահա այն գիտակցությունը, վոր պահում է ինձ կանգուն: Մի ամսից հետո կը լրանա իմ 65 տարին: Եւ այդ հասակում, մարմնով ու հոգով հոգնած, ուժասպառ, յես առավոտ շտապ վեր եմ կենում անկողնից, գնում եմ աշխատանքի, ուրախանում եմ, յերբ հաջողվում է մի դրական բան անել եւ սրտանց ցավում, յեթէ որա անցնում է ապարդյուն:

Ահա, սիրելիս, քո հայրիկը ու նրա մեծ գաղտնիքը

Հնուց սովորություն կա՝ Նոր Տարվա շեմքի վրա կաղանդել մերձավորներին, մաղթել նրանց համար ամեն տեսակի բարիքներ: Յես ել ուզում եմ մաղթել քեզ համար եւ ահա իմ մաղթանքը. թող դու մի գծով նման լինես ինձ. ունենաս հոգուդ մեջ մի աստված, մի սրբություն սրբոց, արժեքներից արժեք, - մի բան, վորը վոգեւորում է քեզ, բովանդակություն է մտցնում կյանքիդ մեջ, մղում է դեպի աշխատանք ու պայքար: Սա շա՛տ լավ մաղթանք է: [ջնջուած տողեր] Խոսքըս կտրեցի, գրածս ջնջեցի ու շարունակությունից հրաժարվում եմ, վորովհետեւ նկատեցի, վոր քարոզի բնույթ է առնում, իսկ քարոզը տաղտկալի բան է՝ թե ասողի եւ թե լսողի համար: Կետ եմ դնում: Չեմ կասկածում, վոր հասկացար ասելիքս: Եւ հոգնեցա արդեն:

Նամակս սկսեցի յերեկ, դեկտ. 31-ին եւ շարունակում եմ այսօր, հունվարի 1-ի գիշերը: Յերկարեց, վորովհետեւ մի քանի տող գրում եմ ու ընդհատում, ընկնում եմ մտքերի մեջ: Չեռներս ու վոտներս ել սառեցին:

Դեհ, մի կողմ թողնելով բարձր նյութերը, գրկում ու համբուրում եմ քեզ պինդ - պինդ, հիշում եմ խոստումդ, թե շուտով կը վերադառնաս Թիֆլիս ու այնտեղից ել կանցնես Յերեւան: Կարոտով սպասում եմ, թեեւ շատ ել չեմ հավատում խոստումիդ: Առո՛ղջ յեղիր, դոչա՛դ:

ՀԱՅՐԻԿԴ
31 դեկտ. – 1 հունվ. 1933

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] *Մարգարիտ Միրզոյանեան (1869-1952) - Յովհաննէս Թումանեանի կինը*

[2] *1887-1888, Թումանեանին սովորել է Սանկտ Պետերբուրգի Գեղագիտական Շարժարարվեստների Խնամատարության տե՛ս նամակ. 62.*

[3] *Բաշ - գլխարկ, ուսանող*

[4] *Յարութ Միրզոյանեան - Թումանեանի կնոջ եղբայրը*

[5] *Վարսենիկ - մեզ անծանոթ անուն*

[6] *Կուրսեր (ռուս.) - դասընթացներ*

[7] *Մարգարիտ Թումանեան - Թումանեանի դուստրը*

[8] *Լիզա - մեզ անծանոթ անուն*

[9] *Սիմոն Զաւարեան (1865-1913) - ազգային, քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիրներից*

[10] 1913թ Օգոստոսին Քաղաքացիների Զուարթնոցի հետ մեկնում է Կարին՝ մասնակցելու ՀԲԴ 7րդ ընդհանուր ժողովին։

[11] Յակոբ Զուրաբեան (Զուրաբեաց, 1866-1921) - ազգային-ազատագրական շարժման գործիչ, բժիշկ։

[12] Atestat (ռուս.) - վկայական։

[13] Տրամվայ (ռուս.) - շարժակառք։

[14] Քաղաքացիներն արտասահման էր անցել Մորեն Մերքիսեանների անձնագրով։

[15] Հմայիակ Դարբինեան - Վանի ինքնապաշտպանութեան մասնակից, «Հայրենիք» բանաստեղծութիւնի հեղինակ։

[16] Աչոտ Քաղաքացի - Քաղաքացիներու որդին։ Զոհուել է Ղարաքիլիսայի ճակատամարտում։

[17] Թուրքէն Քաղաքացի - Քաղաքացիներու որդին։

[18] Աթթիկ - գիւղ Երեւանի նահանգում։

[19] Տե՛ս՝ ծանօթ. 18.

[20] Նկատի ունի գնդապետ Յովսէփեանին։

[21] Na poprovlenie zdorovie (ռուս.) - առողջութիւնը վերականգնելու։

[22] Polkovnik (ռուս.) - գնդապետ։

[23] Գոլկ (ռուս.) - գորգագուռոց։

[24] Dezertir (ռուս.) - դասալիք։

[25] Praporschik inzhenernikh voysk (ռուս.) - ինժեներական զորքերի ցածրաստիճան սպայ։

[26] Անդրէաս - մեզ անծանօթ անուն։

[27] Կրիզիս (ռուս.) - նկատի ունի 1912թի կառավարական ճգնաժամը Հայաստանի Հանրապետութեան առաջին ամիսներին Հայ Սոցիալ-Դեմոկրատները, Սոցիալ-Յեղափոխականները եւ Հայ ժողովրդականները մասնակցում էին խորհրդարանի աշխատանքներին, սակայն ընդդեմ ընդդիմադիր զիրքորոշում ունէին գաղութական կառավարութեան հանդէպ։ Այս հակամարտութիւնը առաւել սրւում է Հոկտեմբերի վերջերին, երբ Քաղաքացիներն, ինչ որ ապիրատ անվստահութեան քուէ ստանալով, հրաժարական է տալիս։ Ստեղծուած իրավիճակից դուրս գալու համար որոշւում է ստեղծել կոալիցիոն կառավարութիւն։

[28] Նկատի ունի Հայ ժողովրդական լիբերալ կուսակցութիւնը, որն այդ ժամանակ ՀԲԴից բացի Հայաստանի Խորհրդարանում քուէներով երկրորդ կուսակցութիւնն էր։

[29] Koalitsya (լատ. coalitio) - կոալիցիա։

[30] Սամսոն Յարութիւնեան (1869-1941) - փաստաբան, Կովկասեան Բարեգործական Ընկերութեան նախագահ, ժողովրդական կուսակցութեան ազդեցիկ անդամներից։ Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարը։

[31] Լեւոն Ղուլեան - ժողովրդական կուսակցութեան ազդեցիկ անդամներից, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնում ստանձնել է պարենաւորման նախարարի պաշտօնը, սակայն երկու շաբաթից հրաժարական է տուել։ տե՛ս՝ Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Հայաստան, 1993, էջ 206-207։

[32] Արտաշէս Էնֆիաջեան - ժողովրդական կուսակցութեան հիմնադիր անդամներից, Թիֆլիսի թեմական դպրոցասէր, կառավարութիւնում վարել է Ֆինանսների նախարարի պաշտօնը։

[33] Մկրտիչ Աթաբէկեան - ժողովրդական կուսակցութեան ազդեցիկ անդամներից, կառավարութիւնում եղել է Հանրային կրթութեան նախարար, սակայն Ղուլեանի հետ երկու շաբաթից հրաժարական է տուել։ տե՛ս՝ Վրացեան, էջ 206-207։

[34] Խաչատուր Կարբենկեան (1882-1918) - պետական, քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ։ Զբաղեցրել է բարձր պաշտօններ Անդրկովկասեան կոմիսարիատում, Հայոց Ազգային Խորհրդում եւ կառավարութիւնում։

[35] Արամ Մանուկեան (1879-1918) - պետական, քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ։ Վանի հերոսամարտի կազմակերպիչներից, Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի հերոսամարտերի ժամանակ ապահովել է հայկական բանակի թիկունքը։

[36] Մկրտիչ Տիգրանեան - մանկավարժ, հասարակական, քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ։ Դասաւանդել է էջմիածնի Գէորգեան հեմարանում եւ համալսարանում։ Իրրեւ ՀՅԴ թեկնածու ընտրուել է Պետական Դումայի անդամ։ Եղել է Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարը։

[37] Արամ Բախչինեանի (1897-1920) - Բախչինեանու որդին, 1914թին կամաւոր զինուորագրուել է բանակ, զօհուել է Զանգիբասարի կռիւների ժամանակ. (տե՛ս՝ Յովհաննէս Բարխուդարեանի Թեմ Մահու, Պէյրութ, 1965 էջ 58; Վրացեան, էջ 44)։

[38] Էնգելի - Իրանի Փհլեւի քաղաքի նախկին անուանումը։

[39] Viglyadel koziryom (ռուս.) - Հպարտ տեսք ունէր։

[40] Ցերքեզկա - չուխայ։

[41] Proizvodsvo (ռուս.) - սպարական ատաքեան։

[42] Zaveduyushchiy garnizhom (ռուս.) - ինքնաշարժերի տեսչութեան վարիչ։

[43] Կազարմա (ռուս.) - զօրանոց։

[44] Paroksizm (յուն. paroxysmos) - հիւանդութեան սրացում, նոպայ։

[45] Վարդգէս/Պաւլա - Բախչինեանու երէց եղբայրը եւ նրա կինը։

[46] Մկրտիչ - Բախչինեանու ազգականներից։

[47] Հոր մասին տե՛ս՝ եռանիւ. 60։

[48] Նովորոսիյսկ - ռուսական քաղաք։

[49] 1919թ Մայիսին Բախչինեանու նախագահութեամբ մի պատուիրակութիւն է մեկնում Եւրոպա, ապա Ամերիկա՝ Հայաստանի Հանրապետութեան համար նիւթական օգնութիւն եւ զրաւեն հաշտութեան համար։

[50] Նկատի ունի Երեւանի թեմական առաջնորդ, 1932-1938 Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանին(1873-1938)։

[51] Նամակի այս հատուածը ինքնագրում պակասում է, այն վերականգնել ենք Մարգարիտ Բախչինեանու բիոգրաֆիական ձեռագիր տետրից, ԳԱՓ, ՅԳՏ, 170/9։

[52] Վիկրի - մեզ անծանօթ անուն։

[53] Մէկ հատուած ինքնագրում պակասում է։

[54] Կարէն Բախչինեանի - Բախչինեանու կրտսեր որդին։

[55] Peroiomi (ռուս.) - բեկումի։

[56] Նկատի ունի ՀՅԴի 1923թի Վիեննայի Խորհրդաժողովը։

[57] Տե՛ս՝ Յովհաննէս Բախչինեանի, Հ. Յ. Դաշնակցութիւնը Անցեալ Յունի Ազգու, Վիեննա, 1923։

[58] Տե՛ս՝ Հայրենիք ամսագիր, 1923 Մայիսից մինչեւ 1924 Յունուար։ Յաջորդաշարը մեզ ցոյց է տուաւաբար (տե՛ս՝ բոլորագրաց՝ Ա. տարի թիւ 7, 8, 9, 11, 12, Բ. տարի թիւ 3, եւ Դ)։ Այն ամբողջական լոյս է տեսել Բէյրութում, 1979թին՝ Յովհաննէս Բախչինեանի, Աշխ Եւ Հայրենիք Մատենաշար ՀՅԴ Հաւաքեան Ընտանեական Միութեան, թիւ 4)։

[59] Նկատի ունի Բուրէնի գիրի ընկնելու լուրը։

[60] Հայրը՝ ուսուցիչ, քահանայ Մարիկոս Տէր-Յովհաննիսեան-Թղիմիսեանեան էր, մայրը՝ Փեփրոնէ Կարէնեանը, զարմուհին էր յայտնի դրամատուրգ Յակոբ Կարէնեանի, որի

«Շուշանիկ», «Վարդանանց պատերազմ» թատերախաղերը Քաջազնունին տակաւին պատանի անդիր գիտէր։ Քաջազնունին իր յուշերում գրում է, որ հայրն ունէր հարուստ գրադարան եւ երեկոյեան ընթերցումների ժամանակ մայրը բանաւոր էր բարձրաձայն կարդում։

61 Նկատի ունի Թիֆլիսի ռէալական գպրոցի խմբակը, որը ղեկավարում էր ռուսական «Ղարաղեոչ վոլէ» (Ժողովրդի կամք) կազմակերպութեան կողմից։

62 Քաջազնունին Սանկտ Պետերբուրգի Քաղաքացիական Ճարտարապետների Խնամատարում ուսանելու տարիներին անդամակցել, աշխուժօրեն ղեկավարել է Պետերբուրգի հայ ուսանողութեան «Միություն» միութիւնը, միաժամանակ թղթակցել է հայ եւ ռուսական պարբերականներին, Novoye obozrenie [Նոր տեսութիւն] օրաթերթում տպագրել է «Եկեղեցիների հետ մէջ-մենակ» յոդուածաշարը։

63 Ամուսնացել է 1880ին։

64 Շպիկներ (ռուս.) - Լիսեռներ։

65 Նկատի ունի 1905-1907ի ռուսական առաջին յեղափոխութիւնը։

66 Նկատի ունի Թուլաստանի վարչական Պետեր Ստոլիպինի (1862-1911) վարչակարգը։

67 1908-1912ին ցարական իշխանութիւնների կողմից ՀՅԴի դէմ դատ է բարուցուում, ձերբակալուում են մեծ թուով մտաւորականներ եւ դաշնակցական գործիչներ։ 1910ին ձերբակալուում է նաեւ Քաջազնունին, որն այդ տարիներին, բացի քաղաքական գործունէութիւնից, ղեկավարում էր իր նախագծով կառուցուող Բաքուի Հայկական Մայր եկեղեցու շինարարութիւնը (քանդուած 1930ականներին)։

68 Ազատ է արձակուում խաչոր նաւթարդիւնաբերող Ռուսիատի տրամադրած 10.000ռուբլուականով եւ թատրոնի դատակոչումից խուսափելու համար, Միքիմանեանի (տես՝ նոյնի. 4) անձնագրով անցնում է արտասահման։

69 Նկատի ունի Աւետիս Ահարոնեանի «Մտոր Հորիզոնների Տակ» պատմուածքը։

70 1917ի ռուսական Փետրուարեան բուրժուա-դեմոկրատական յեղափոխութիւն։

71 1918ին Թուլաստանում ստեղծուած խորհրդարանական հանրապետութիւն։

72 Խորհրդարանական յեղաշրջումից յետոյ Քաջազնունին ձերբակալուում է Շանթի եւ Ազրաքանի հետ, փետրուարեան յեղաշրջումից յետոյ անցնում է Պարսկաստան, աքսորից Պոլիս, 1921-1922ին հանրապետում է Թուրքիայում (Բուխարեստ)։

73 Նկատի ունի Լոզանի դաշնագիրը (1922-23), որը հանրապետ Թուրքիայի սահմանները՝ փոքրօրէն փոխարինելով 1920ի Սեւրի դաշնագրին։

74 Հրաչեայ Քաջազնունի - Քաջազնունու դուստրը։

75 Զանգիբասար - Երեւանի մերձակայ գաւառակ, որը բնակեցուած էր Թուրքերով։

76 Խորհրդային Հայաստանում տպրած տարիներին (1925-1937), Քաջազնունին դասաւանդել է Երեւանի Պետական Համալսարանում, Շինարարական Խնամատարում։ Այդ տարիներին նրա նախագծով կառուցուում են Երեւանի Զէթ-օճառի գործարանի շէնքը, մի շարք շինութիւններ Արմաւիրում, Ապարանում։ Ակտիւօրէն մասնակցում է Լենինականի (տե՛ս՝ Գիւմրի) 1926ի երկրաշարժից յետոյ վերականգնման աշխատանքներին (տե՛ս՝ Քաջազնունու զեկուցագրերը այդ մասին. Լ. Դոլուխանեան, Յովհաննէս Քաջազնունի՝ Յարտարապետ, Երեւան, ՀՍՍ Գիտութիւնների Ազգային Ակադեմիա, 1997, էջ 26), 1935ին նրա նախագծով կառուցուած քաղաքային դրադարանի շէնքը (ցաւօր կանգուն) հայկական ճարտարապետութեան լաւագոյն նմոյշներից է։

HOVHANNES KADJAZNOUNI'S LETTERS TO HIS FAMILY
(Summary)

MARINE HAROYAN

Twelve unpublished letters are brought to the attention of the reader.

The author of these letters, Hovhannes Kadjaznouni, the first Prime Minister of the Republic of Armenia (1918-1920), addressed them to his family members.

The letters, covering a period of some 45 years, touch upon personal, family, national and state issues and reflect the personal thoughts and feelings of Kadjaznouni regarding the loss of his son on the battlefield and the impact it had on the family, the uprooting, deportation and massacres of the Armenians, and the ensuing refugee crisis due to battles, the loss of Armenian land, the governmental crisis of the Armenian Republic, etc.